ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/68

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 19.09.2019թ.)

քննելով Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 18.09.2019թ. ներկայացված (19.09.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/68 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 18.09.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն՝ որպես հրավերի պահանջներին բավարարող և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Իսկ արդեն անհասկանալի պայմաններում գնահատող հանձնաժողովը 13.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրել է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատելիս տեղի է ունեցել վրիպակ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կրկին ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ առկա է անհամապատասխանություն օրենքով սահմանված կարգով բանկային երաշխիքը՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 /իննսուն/ աշխատանքային օր, մինչդեռ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 10.09.2019թ. ներկայացված բանկային երաշխիքի ժամկետը սահմանվում է 08.11.2019թ.:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում՝ Ընկերությունը գտնում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ուղղակի հետևում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով հայտի ապահովման շտկման հնարավորություն:

Հիմնվելով սույն բողոքի փաստերի հիման վրա կարելի է արձանագրել, որ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի կարիքների համար «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ, որին հայտ է ներկայացրել նաև «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն և ճանաչվել ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ որպես հրավերի պահանջներին բավարարող և ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը կրկին, երկրորդ անգամ գնահատելու արդյունքում «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթին 10.09.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 10.09.2019թ. տրամադրված թիվ 47-273 բանկային երաշխիքը, որը գործում է մինչև 08.11.2019թ.:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը,

վավեր է մինչև սույն օրենքին հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի Օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք բաց մրցույթի դեպքում կազմում են ոչ ավել, քան 90 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է 2019 թվականի սեպտեմբերի 10-ին, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոհիշյալ փաստական հանգամանքները և իրավական նորմերը Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և ապա մերժելու մասին որոշումը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված չէ ապահովելու գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով բառերի և ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի իրավական ակտի դրույթներից, նորմատիվ իրավական ակտով սահմանված

սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքներ քննող անձի կողմից ամբողջությամբ նույն փաստական հանգամանքներում նույնաբովանդակ բողոքները արդեն իսկ բավարարվել են, մասնավորապես թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/51 և ԳԲՔԱ-ԼՕ-2019/38 որոշումներով:

Օրինակ, թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/51 ծածկագրով բողոքի շրջանակներում կայացրած որոշմամբ բողոքներ քննող անձն արձանագրել է՝ ելնելով վերոշարադրյալ նորմի վերլուծությունից՝ կարելի է եզրահանգել, որ Հանձնաժողովը «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս, թույլ է տվել ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. թիվ 244-Ա հրամանով հաստատված Մրցույթի հրավերի օրինակելի ձևի որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանություն՝ հաշվի չի առել այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ Օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված որոշմամբ խախտվել են գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց՝ «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի կողմից 08.07.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել ամբողջությամբ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.09.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ն (հետայսու նաև՝ Մասնակից) 23.09.2019թ. դիմել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով վերջինիս ներգրավել «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննությանը:

Մասնակիցը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում Մասնակիցը ճանաչվել է հաղթող և մինչև «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից բողոք ներկայացնելը Ծաղկաձորի համայնքապետարանը որոշում է կայացրել պայմանագիր կնքել Մասնակցի հետ, ուստի վերջինս շահագրգռված է բողոքի քննության արդյունքերով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն որոշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատելիս տեղի է ունեցել վրիպակ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կրկին ուսումնասիրելուց հետո պարզ է դարձել, որ առկա է անհամապատասխանություն. օրենքով սահմանված բանկային երաշխիքը՝ հայտի ապահովումը, պետք է վավեր լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 /իննսուն/ աշխատանքային օր, մինչդեռ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 10.09.2019թ. ներկայացված բանկային երաշխիքի ժամկետը սահմանվում է 08.11.2019թ.: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց:

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ն գտնում է, որ է «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նշված որոշումն իրավաչափ է և համապատասխանում է թե «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի և թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Այսպես, «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի 7.4 կետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

Մինչդեռ, «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից «Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթին 10.09.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին է ներկայացվել «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 10.09.2019թ. տրամադրված թիվ 47-273 բանկային երաշխիքը, որը գործում է մինչև 08.11.2019թ.:

Պարզ հաշվարկը ցույց է տալիս, որ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին ներկայացված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 10.09.2019թ. տրամադրված թիվ 47-273 բանկային երաշխիքը՝ հայտի ապահովումը վավեր չէ 90 (իննսուն) աշխատանքային օր, այսինքն այս մասով ուղղակիորեն չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ

բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Նույն կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Դրա հետ մեկտեղ, մրցույթի հրավերի 7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումո ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա

ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Մինչդեռ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին ներկայացված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 10.09.2019թ. տրամադրված թիվ 47-273 բանկային երաշխիքը՝ հայտի ապահովումը վավեր չէ 90 (իննսուն) աշխատանքային օր:

Շարադրված փաստերից ուղղակի երևում է, որ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ այն վավեր է հրավերով պահանջված 90 (իննսուն) աշխատանքային օրից պակաս, հետևաբար հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից չէր կարող բավարար գնահատվեր՝ այն էլ հիմնավորվեր, որ նշված հայտը, և տվյալ դեպքում բանկային երաշխիքը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

«Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ն գտնում է, որ մրցույթի գնահատող հանձնաժողովը կատարել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Այս տեսանկյունից և այս հիմնավորմամբ Մասնակիցը գտնում է, որ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

3. Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Ծաղկաձորի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.09.2019թ. թիվ 382 գրությամբ հայտնել է հետևյալը.

01.08.2019թ. Ծաղկաձոր համայնքի կարիքների համար «ԾՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի բակային տարածքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով հայտարարվել է բաց մրցույթի ընթացակարգ:

Հայտերի գնահատման արդյունքում ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Սակայն 13.09.2019թ. հանձնաժողովի կողմից հրավիրված նիստի ընթացքում հայտերը վերագնահատելիս արձանագրվել է, որ տեղի է ունեցել վրիպակ, գնահատող հանձնաժողովի 11.09.2019թ. նիստի արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն. օրենքով սահմանված կարգով՝ բանկային երաշխիքը՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր, մինչդեռ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 10.09.2019թ. ներկայացված բանկային երաշխիքի ժամկետը սահմանված է 08.11.2019թ.:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Գնահատող հանձնաժողովի կողմից «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Այնուհետև, որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման պահանջ է ներկայացվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.09.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2019/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/68 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 10.09.2019թ. հայտ է ներկայացրել «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար այն հիմքով, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 18.09.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, Ծաղկաձորի համայնքապետարանի 23.09.2019թ. թիվ 382 գրությունը, «Թիվ 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից

արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում, որը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում, հայտով ներկայացվում է կանխիկ փողի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակից կամ բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Եթե բանկային երաշխքի ձևով հայտի ապահովում ներկայացրած մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում է հայտով ներկայացված բանկային երաշխիքի բնօրինակը՝ իր կողմից հաստատված ուղեկցող գրությամբ:

Հրավերի նույն մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 10.09.2019թ. հայտ է ներկայացրել «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը որպես հայտի ապահովում ներկայացրել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 10.09.2019թ. տրված թիվ 47-273 բանկային երաշխիքը, որի 5-րդ կետով սահմանվել է, որ երաշխիքը գործում է մինչև **08.11.2019թ.**:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.09.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.09.2019թ. արտահերթ նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար այն հիմքով, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի վավերականության ժամկետը սահմանված է 08.11.2019թ., մինչդեռ հայտի ապահովման վավերականության ժամկետը պետք է լինի հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի մասի 7-րդ կետի 7.4 ենթակետով սահմանվել է, որ **հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:** Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացվել է **10.09.2019թ.**, իսկ նույն ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովում բանկային երաշխիքի վավերականության ժամկետը սահմանվել է **08.11.2019թ.**: Արձանագրում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովումը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, քանի որ այն չի ապահովում հայտը ներկայացնելու օրվանից հաշված 90 աշխատանքային օր վավեր լինելու պահանջը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Գտնում եմ, որ մերժելով Ընկերության հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է, քանի որ Ընկերության հայտի ապահովումը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչիկ և Լիանա» ՍՊԸ-ի կողմից 18.09.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**